

կ'ունենայ միայն չորս դուստր, որոնց անունը մեզի կուտայ Տէր Յովհաննէանց՝ Շախնարաթ, Շախաս, Աղիզ եւ Մէրջան: Տէր Յովհաննէանց կ'աւելցնէ. «Մինչեւ ցամ Տեառն 1708 ձգի ճիւղահամարութիւն կամ սերումն ի վեր անդր յիշատակեալ ծննդոցն Մէլիք աղայի եւ Խօջայ Վարդանի, եւ զնոցանէ զկնի նոյն ժամանակի չիք ինչ տեղեկութիւն»: (61)

Ես ալ այսքանով կը փակեմ այս նշանաւոր գերդաստանին պատմութիւնը, որու մասին անտարակոյս դեռ ըլլալու են շատ աւելի մանրամասնութիւններ եւ նիւթ: Սակայն, աւարտելէ առաջ, հետաքրքրական է ըսել, որ այսքան մեծատոհմ եւ մեծահարուստ գերդաստան մը չափազանց քիչ, գրեթէ աննշան ազգային շինարարարութիւն թողուցած է: Կ'ա-

կընկալուի, որ Յայսմաւուրք մը գրել տալէ, աւետարան մը նորոգել տալէ, կամ շարք մը Հայ եկեղեցական նշխարհներ պահելէ աւելի մեծագործութիւններ ըրած ըլլային: Գուցէ ըրած են, բայց ատոնց համբաւը մեզի հասած չէր կամ գուցէ դեռ անծանօթ կը մնայ:

Ֆիզիքական պարագայ մըն ալ այս գերդաստանին անդամներուն վաղաժամ մեռնիլն է: Խօջայ Սաֆար կը մեռնի 55 տարեկան, եղբայրը՝ Խօջայ Նազար 52 տարեկան, Նազարի որդի Սարֆրազ Պէկ՝ 55 տարեկան, էլիազ Պէկ, ըստ երեւոյթին, նոյնիսկ աւելի կանուխ:

Ասոնք չեմ կարծեր, զուգադիպութիւններ ըլլան, այլ աւելի ֆիզիքական անկանոնութեան մը, ախտի մը արդիւնքներն են, գուցէ սրտի անկանոնութեան: Ամէն պարագայի տակ նկատելի կէտ մըն է ասիկա:

(61) Անդ՝ էջ 92:

